ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/118

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ «Գդակ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ա. Սարգսյանի (լիազորագիր տրված՝ 10.06.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 04.06.2020թ. թիվ 26/26-1/8194-2020 գրությամբ «Գդակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 02.06.2020թ. թիվ Ե/40/843-20 գրության հիման վրա, 04.06.2020թ. թիվ 26/26-1/8194-

2020 գրությամբ նախաձեռնել է «Գդակ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Գդակ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկներն և դիրքորոշումը.

«Գդակ» ՍՊԸ-ն 13.06.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Գդակ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված փաստական և իրավական հիմքերի վերաբերյալ առարկում ենք հետևյալ հիմնավորմամբ.

Պատվիրատուի գործողություններն իրավաչափ չեն և չկան բավարար հիմնավորումներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Փաստեր.

1. Պատվիրատու «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերության ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-36/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2020 թվականի ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 2 որոշմամբ նիստը կասեցվել է և ի թիվս այլ մասնակիցների «Գդակ» ՍՊ ընկերությանը առաջարկ է ներկայացվել շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

11.05.2020թ. թիվ 2 արձանագրությամբ հանձնաժողովը որոշել է հաջորդ նիստն անցկացնել 15.05.2020թ. ժամը 15:00-ին:

2. Կասեցված նիստը, որը պետք է տեղի ունենար 15.05.2020 թվականին տեղի է ունեցել 19.05.2020 թվականին, ժամը՝ 15:00-ին:

Պատվիրատուն 19.05.2020 թվականի թիվ 2.1 արձանագրությամբ որոշել է ի թիվս այլ մասնակիցների՝ «Գդակ» ՍՊ ընկերության առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը, բացառությամբ Ընկերության կողմից առաջարկվող 40 և 41 չ/բ, որոնք գնահատվել են անբավարար:

3. 22.05.2020 թվականին կայացած նիստի թիվ 2.2 արձանագրությամբ պատվիրատուն որոշել է՝ մրցույթի փաստաթղթերի գնահատման արդյունքում «Գդակ» ՍՊ ընկերությանը և «ՏՆՄ» ՍՊ ընկերությանը ճանաչել ընտրված մասնակիցներ և առաջարկել կնքել մատակարարման պայմանագիր:

4. Պատվիրատուն, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի 45-րդ կետով, 02.06.2020 թվականի Ե/40/843-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ընտրված մասնակից ճանաչված «Գդակ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց սկսելու նպատակով:

02.06.2020 թվականի գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերության կողմից 41-րդ չափաբաժնի համար առաջարկվող ապրանքի շտկված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին և 19.05.2020 թվականի թիվ 2.1 որոշմամբ Ընկերության մասնակցության հայտը 41-րդ չափաբաժնով գնահատվել է անբավարար:

Իրավական հիմքեր.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝.... գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Պատվիրատուն 02.06.2020 թվականի գրությամբ չի հիմնավորել, թե 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ո՞ր ենթակետով է ղեկավարվել և հատկապես, առկա փաստերը ո՞ր ենթակետով որակված հիմքն է արձանագրում, թեև՝ թիվ 2.2 արձանագրությամբ Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից և առաջարկել կնքել մատակարարման պայմանագիր:

Պատվիրատուի կողմից ներկայացված գրության ուսումնասիրությունից չենք կարող արձանագրել Ընկերության կողմից թույլ տրված խախտման որոշակիություն՝ հիշատակված հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ենթակետերից որևէ մեկի կոնտեքստում,

ուստի՝ անորոշության պայմաններում որևէ մեկի գործունեությունը չի կարող սահմանափակվել կամ ենթարկվել չհիմնավորված պատասխանատվության:

ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի «հետայսու՝ Կարգ» 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 45-րդ կետով սահմանված՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները լիազոր մարմնին տրամադրելը պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ միայն կարող ենք փաստել իրավահարաբերության առաջացումը: Հակառակ դեպքում, Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին եւ այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնի այլ չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի եւ արտահայտությունների տառացի նշանակությունը:

Սույն գործի փաստերի համաձայն, թեև Պատվիրատուն չի հիմնավորել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ենթակետերի հիմքերի գոյությունը, այնուամենայնիվ իր գնահատմամբ, եթե այդպիսիք կան, ապա այդ հիմքերն ի հայտ են եկել դեռևս 19.05.2020 թվականին, համաձայն թիվ 2.1 արձանագրության: Մինչդեռ, Պատվիրատուի կողմից մասնակցի տվյալները համապատասխան հիմքերով ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացվել 02.06.2020թ. Ե/40/843-20 գրությամբ:

Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը, որպիսի պարագայում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված պատասխանատվությունը չի կարող ծագել և հանգեցնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Պետական մարմինների գործողությունները, որոնք դուրս են օրենսդրի կողմից սահմանված լիազորությունների շրջանակից, չեն կարող իրավական հետևանք առաջացնել իրավահարաբերության սուբյեկտի համար, մինչդեռ, այն պատասխանատվության հիմք կարող է հանդիսանալ գործողության կրողի համար:

Վերլուծելով վերոգրյալ փաստերը՝ կարգավորող նորմերի համատեքստում արձանագրում ենք, որ Պատվիրատուն չի հիմնավորել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա, բ, գ ենթակետերից որևէ մեկի առկայությունը, ինչպես նաև չի գործել Կարգի 45-րդ կետով սահմանված 5 օրյա ժամկետում»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է մերժել ՀՀ ֆինանսների նախարարության գրության հիման վրա «Գդակ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/118 ընթացակարգի շրջանակներում 15.06.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.06.2020թ. թիվ Ե/40/843-20 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից սեփական կարիքների համար ռետինատեխնիկական պատրաստվածքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-36/20 ծածկագրով գնման ընթացակարգ, որին ի թիվս մյուս մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Գդակ» ՍՊԸ-ն: Մանակցության հայտի գնահատման արդյունքում «Գդակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնակցության հայտում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ հրավերի պահանջներին: Գնահատող հանձնաժողովի 11.05.2020թ. թիվ 2 որոշմամբ նիստը կասեցվել է և «Գդակ» ՍՊԸ-ին առաջարկվել շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում «Գդակ» ՍՊԸ-ի կողմից

շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները, սակայն թիվ 41-րդ չափաբաժնի համար առաջարկվող ապրանքի շտկված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, քանի որ հրավերով սահմանված է ներքին տրամագիծը 310մմ, իսկ մասնակիցը առաջարկել է արտաքին տրամագիծը՝ 15.6±1սմ (և սկզբանական տարբերակում, և շտկված տարբերակում): Գնահատող հանձնաժողովի առ 19.05.2020թ. թիվ 2.1 որոշմամբ «Գդակ» ՍՊԸ-ի մասնակցության հայտը 41-րդ չափաբաժնով գնահատվել է անբավարար և մերժվել»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի 45-րդ կետի համաձայն՝ ներկայացնում է «Գդակ» ՍՊԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների խախտումը հիմնավորող փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/118 ընթացակարգի շրջանակներում 15.06.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/118 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/118 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-36/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գդակ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 19.05.2020թ. նիստի թիվ 2.1 արձանագրությամբ արձանագվել է, որ գնահատող հանձնաժողովը, դիտարկելով «Գդակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված Հավելված 1.1-ը և առաջնորդվելով Կարգի 42-րդ կետով, վերջինիս կողմից առաջարկվող 40-րդ և 41-րդ չափաբաժինները գնահատել է անբավարար:

3. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետի դրույթով, Ընկերության

տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազոր մարմնին ներկայացրել է 02.06.2020թ. թիվ Ε/40/843-20 գրությամբ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության՝ 04.06.2020թ. թիվ 26/26-1/8194-2020 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի՝ 02.06.2020թ. թիվ Ε/40/843-20 գրությունը, «Գդակ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-36/20 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Գդակ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 19.05.2020թ. նիստի թիվ 2.1 արձանագրությամբ արձանագվել է, որ գնահատող հանձնաժողովը, դիտարկելով «Գդակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված Հավելված 1.1-ը և առաջնորդվելով Կարգի 42-րդ կետով, վերջինիս կողմից առաջարկվող 40-րդ և 41-րդ չափաբաժինները գնահատել է անբավարար:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազոր մարմնին ներկայացրել է 02.06.2020թ. թիվ Ե/40/843-20 գրությամբ:

Վերը նշված փաստերով պայմանավորված և հիմք ընդունելով ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-36/20 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 19.05.2020թ. նիստի թիվ 2.1 արձանագրությունը՝ Ընկերության հայտի մերժման վերաբերյալ, արձանագրում եմ, որ «Գդակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 19.05.2020թ., սակայն Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին 02.06.2020թ., որի պայմաններում Պատվիրատուի կողմից խախտվել է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը (այդ թվում՝ մասնակցի տվյալները) լիազորված մարմին ներկայացնելու Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում՝ Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոգրյալ իրավանորմերի մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ

դեպքում Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը՝ այն է հինգ աշխատանքային օրյա ժամկետը: Ընդ որում՝ օրենսդրությունը չի նախատեսում նշված ժամկետը վերականգնելու ինստիտուտը, հետևաբար, տվյալ դեպքում հինգ աշխատանքային օրյա ժամկետի խախտման հանգամանքները չեն դիտարկվում:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Գդակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 04.06.2020թ. թիվ 26/26-1/8194-2020 գրությամբ «Գդակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ